ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 134-րդ և 146-րդ հոդվածներով ներկայացնում ենք Արա Նռանյանի, որպես հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի՝ Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» ընդդիմադիր խմբակցությունների միջև համաձայնեցված թեկնածությունը: Թեկնածուին կներկայացնի Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

Հաշվի առնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումները, ըստ որի եթե թեկնածուն զբաղեցնում է ընտրվող կամ նշանակվող պաշտոնի համար Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող պաշտոն, ապա այդ պահանջներին վերաբերող փաստաթղթերը կարող են չներկայացվել, կից ներկայացնում ենք «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների նիստերից համապատասխան քաղվածքները, ինչպես նաև Արա Նռանյանի գրավոր համաձայնությունն ու կենսագրական տվյալները:

«Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար՝
Տ. Աբրահամյան

«Հայաստան» խմբակցության քարտուղար՝
Ա. Մինասյան

16.04.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղվածք «Պատիվ ունեմ» խմբակցության նիստի)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 9-րդ, 134-րդ և 146-րդ, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության կանոնադրությունը,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ընտրության համար, որպես Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության հետ համաձայնեցված միասնական թեկնածու առաջադրել Արա Նռանյանին:
2. Արա Նռանյանի թեկնածությունը խմբակցությունների անունից կներկայացնի Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Պատիվ Ունեմ» խմբակցության քարտուղար
Տ. Աբրահամյան

16.04..2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղվածք «Հայաստան» խմբակցության նիստի)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 9-րդ, 134-րդ և 146-րդ, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվաշով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ընտրության համար, որպես Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության հետ համաձայնեցված միասնական թեկնածու առաջադրել Արա Նռանյանին:
2. Արա Նռանյանի թեկնածությունը խմբակցությունների անունից կներկայացնի Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Հայաստան» խմբակցության քարտուղար՝
Ա. Մինասյան

16.04..2025թ.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

պաշտոնում ընտրվելու համար

Ես, Արա Ռուդիկի Նռանյանս, տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու համար:

Արա Նռանյան

16 ապրիլի 2025թ.

ԱՐԱ ՆՌԱՆՅԱՆ

ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ ԵՎ ՎԱՅՐԸ

15 հոկտեմբերի 1973 թվական, ք. Երևան

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

2004, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ
Տնտեսագիտության թեկնածու (ատենախոսության թեման՝ «Հայաստանի քաղաքացիական ավիացիայի զարգացման տնտեսական հիմնախնդիրները»)

1990-1995, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ
Ֆինանսահաշվային ֆակուլտետ,
«Հաշվապահական հաշվառում, վերահսկողություն և տնտեսական գործունեության վերլուծություն» մասնագիտություն,
Որակավորումը՝ տնտեսագետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2021-ից մինչ օրս, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ

2016-2019, ՀՀ վերահսկիչ պալատ (ՀՀ հաշվեքննիչ պալատ)
Նախագահի տեղակալ, ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

2015-2016, Եվրասիական տնտեսական հանձնաժողով
ԵՏՀ Կոլեգիայի անդամ (Նախարար), Մոսկվա

2013-2014, Ավշարի գինու գործարան ՍՊԸ
Վաճառքի և մարքետինգի գծով տնօրեն

2012-2013, Գրանդ Սան ՍՊԸ
Գործադիր տնօրեն

2012-2013, Գրանդ Մոթորս ՍՊԸ (Honda Motor Co., Ճապոնիա, պաշտոնական դիստրիբյուտոր)
Գործադիր տնօրեն

2008-2011, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության ամբիոնի դասախոս

2007-2012, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
- Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ,
- Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի խորհրդի խորհրդարանական անդամ,

- Սևծովյան տնտեսական համագործակցության Խորհրդարանական վեհաժողովի հայկական պատվիրակության անդամ,
- ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի հայկական պատվիրակության անդամ:
- ՀԱՊԿ խորհրդարանական վեհաժողովի հայկական պատվիրակության անդամ:

2004-2007, ՀՅԴ Բյուրո
Տնտեսական հարցերով խորհրդական

2001-2004, ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
Ռազմավարական ծրագրերի մշակման և վերլուծության բաժնի պետ

2000-2001, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն
Պետական բաժնեմասի կառավարման բաժնի պետ

1997-2000, ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
Տարիֆիկացիայի և վերլուծության բաժնի առաջին կարգի մասնագետ
Սերտիֆիկացման և լիցենզավորման բաժնի առաջին կարգի մասնագետ
Թռիչքների անվտանգության տեսչության գլխավոր մասնագետ

1993-1995, Արա ՍՊԸ
Գլխավոր հաշվապահ

1990, Սանտեխնիկ կոոպերատիվ
Հաշվետար

ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1993-1994, Հայկական հեռուստաընկերություն
Երաժշտական երիտասարդական հաղորդումների համահեղինակ և հաղորդավար

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Բազմաթիվ գիտական և վերլուծական հոդվածների և հետազոտությունների հեղինակ՝ հրապարակված ինչպես հայկական, այնպես էլ օտարերկրյա հրատարակություններում:

ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐԸ

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի շնորհակալագիր, 2023
- ԵԱՏՄ մեդալ «Եվրասիական տնտեսական միության զարգացմանը ներդրման համար», 2018
- Ղազախստանի Հանրապետության վարչապետի շնորհակալագիր, 2016
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պատվոգիր, 2016

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամուսնացած է, ունի երկու երեխա: